ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՄՍՔ-ԳՀԱՇՁԲ-19/2

ք. Սիսիան

«16» ապրիլ 2019թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Նորիկ Բունիաթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը[1]:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[1] *Սույն պայմանագրի նախագծի 2.4.4 կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները:*

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1777200 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[2]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին[4]:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[2] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[4] *Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:*

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[5]:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[6]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ

---

[5] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[7]:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնք	**«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ**
ք. Սիսիան, Սիսական 31	**Արարատի մարզ, գ. Բուրաստան Չարենցի 2**
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900292180032	**Հ/Հ 15700 50751950100**
ՀՎՀՀ 09215978	**ՀՎՀՀ 04232258**
Համայնքի ղեկավար ________ Ա. Սարգսյան (ստորագրություն) Կ.Տ	**Տնօրեն ________ Ն. Բունիաթյան** (ստորագրություն) Կ.Տ

---

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված N 1
«16» ապրիլ 2019թ. կնքված
ՍՄՍՔ-ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/1	**Սիսիանի համայնքի կարիքների համար թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ:** Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: Նախատեսել. – Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ; – Առաստաղի հարդարում մոտ 670քմ; – Սանհանգույցներում ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով; – Հին դռների փոխարինում մետաղապլաստով մոտ 95քմ, լուսամուտների փոխարինում մետաղապլաստով մոտ 160քմ, արտաքին շեպերի սվաղում; – Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով; – Փայտյա հատակի փոխարինում մոտ 679քմ և նորի իրականացում: – Էլեկտրական հաղորդալարերի փոխարինում մոտ 400մ, անջատիչների և վարդակների տեղադրում; – Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ, ընդ որում փորձաքննություն իրականացնողն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման	դրամ	717600	1	ք. Սիսիան, Սպանդարյան 82	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

		համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> << օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի << քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ **-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /արտոնագիր/, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, -**Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:					
2	71241200/2	**Սիսիանի համայնքի կարիքների համար թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատության կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ:** Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: Նախատեսել. - Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ; - Առաստաղի հարդարում մոտ 801քմ; - Սանհանգույցներում ջրամատակարարման և	դրամ	813600	1	ք. Սիսիան, Շիրվանզադե 4Ա	Պայման գրիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

		ջրահեռացման խողովակների փոխարինում նորով; – Հին դռների փոխարինում մետաղապլաստով մոտ 62քմ, լուսամուտների փոխարինում մետաղապլաստով մոտ 124քմ, արտաքին շեպերի սվաղում; – Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով; – Փայտյա հատակի փոխարինում մոտ 816քմ և նորի իրականացում: – Էլեկտրական հաղորդալարերի փոխարինում մոտ 1200մ, անջատիչների և վարդակների տեղադրում; – Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ, ընդ որում փորձաքննություն իրականացնողն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ **-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /արտոնագիր/, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական					

		նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, -**Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:					
3	71241200/3	**Սիսիանի համայնքի կարիքների համար Նորավան բնակավայրում գործող խմբի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ:** Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: Նախատեսել. - Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ; - Առաստաղի հարդարում մոտ 115քմ; - Սանհանգույցներում ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով; - Հին դռների փոխարինում մետաղապլաստով մոտ 15քմ, լուսամուտների փոխարինում մետաղապլաստով մոտ 21քմ, արտաքին շեպերի սվաղում; - Տանիքի հիմնանորոգում մոտ 90քմ; - Նոր պատի կառուցում մոտ 26քմ; - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով; - Փայտյա հատակի փոխարինում մոտ 110քմ և նորի իրականացում: - Էլեկտրական հաղորդալարերի փոխարինում, անջատիչների և վարդակների տեղադրում; - Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ, ընդ որում փորձաքննություն իրականացնողն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման	դրամ	246000	1	Սիսիան համայնք, Նորավան բնակավայր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

		համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ -**Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /արտոնագիր/, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, -**Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292180032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ
Արարատի մարզ, գ. Բուրաստան Չարենցի 2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 50751950100
ՀՎՀՀ 04233258

Տնօրեն _____ **Ն. Բալասանյան**
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	*Սիսիանի համայնքի կարիքների համար թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ*	-	-	-	717600	717600	717600	717600	717600	717600	717600	717600	717600	717600
2	71241200/2	*Սիսիանի համայնքի կարիքների համար թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատության կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ*	-	-	-	813600	813600	813600	813600	813600	813600	813600	813600	813600	813600

3	71241200/3	*Սիսիանի համայնքի կարիքների համար Նորավան բնակավայրում գործող խմբի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ*	-	-	-	246000	246000	246000	246000	246000	246000	246000	246000	246000	246000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292180032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ
Արարատի մարզ, գ. Բուրաստան Չարենցի 2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 50751950100
ՀՎՀՀ 04232258

Տնօրեն _____ **Ն. Բունիաթյան**
(ստորագրություն)

Կ.Տ